



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

27.05.2014 թ. N \_\_\_\_\_

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

***Միտելի՛ գորակոչիկներ***

Շնորհավորում եմ ամառային գորակոչի կապակցությամբ և մաղթում, որ Ձեր զինվորական ծառայությունն ուղեկցվի միմիայն հաջողություններով և դրական զարգացումներով:

Վստահ եմ, որ յուրաքանչյուր քաջ գիտակցում եք հայրենիքին ծառայելու բոլոր կարևորություններն ու առաջնահերթությունները և այդ գիտակցումով էլ կազմակերպելու եք Ձեր բանակային առօրյան՝ նվիրումով ու հերոսաբար նպաստելով հայոց բանակի պաշտպանունակության առավել բարձրացմանը:

Ցանկանում եմ, որ առաջիկա երկու տարիները Ձեզ համար լինեն նորովի կայացման և հստակ ինքնահաստատման տարիներ՝ լեցուն հայրենասիրության ու հայրենապաշտության բազում դասերով:

Առիթից օգտվելով ցանկանում եմ շնորհավորել նաև բոլոր գորակոչիկների ծնողներին, ինչպես նաև ողջ հայ ազգին, քանզի յուրաքանչյուր գորակոչ ինքնին տոն է, բանակաշինությանը մաս կազմող կարևորագույն մի գործընթաց, որի պատշաճ կազմակերպումը բոլորիս պատվի ու հայրենիքի հանդեպ ունեցած պատասխանատվության արտահայտությունն է:

Ամենայն բարիք Ձեզ, ինչպես նաև անսահման առողջություն և տոկունություն:

***Հարգանքներով***

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**